ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0095

Մարշալ Բաղրամյան 19
Հեռ. (374-11) 513257

N_____

«29» նոյեմբեր 2017

ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԿ
ԼՐԱԳՐՈՂ ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Ինձ ուղղված գրությունների գերակշիռ մասը այժմյան տեխնոլոգիաների բարձր հասանելիության շնորհիվ ստացել եմ ինչպես էլ. փոստի, այնպես էլ սոցիալական հարթակների միջոցով: Որպես երիտասարդ պատգամավորի՝ իմ գործունեության այս կարճ ժամանակահատվածում դիմել են հասարակական սեկտորի ամենատարբեր ներկայացուցիչներ և, իհարկե, քաղաքացիներ, ովքեր իրենց մտահոգություններն են հայտնել հիմնականում բնապահպանական, կրթական, իրավունքների ոտնահարման և գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ: Խնդիրները բազմաբնույթ են, որոնց մասին ԱԺ ամբիոնից բարձրաձայնվել է, իսկ որոշ դեպքերում առավել համապարփակ ինֆորմացիա ստանալու համար անհրաժեշտություն է առաջացել դիմել գործադիր մարմնի տարբեր օղակներին, ինչն էլ հիմք է հանդիսացել տվյալ հարցի շուրջ գործընթաց սկսելու համար:

Վերջին նմանատիպ օրինակը վերաբերում էր մարզերում բազմահամակազմ դասարանների առկայությանը: Տվյալ խնդրի շուրջ ահազանգել էին Գեղարքունիքի մարզի Կութ, Ազատ, Գեղամաբակ, Ջաղացաձոր, Նորաբակ համայնքների ներկայացուցիչները: Որի շուրջ, ի պատասխան մեր հարցմանը, նաև գրավոր պարզաբանում ներկայացրեց ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ում միջամտությամբ էլ հարցը կկարգավորվի:

Ինչ վերաբերում է օրենսդրական նախաձեռնություններին, ապա, այո՛, այդպիսի նախադեպ կա: Հարցը բարձրացվել է հասարակական սեկտորի կողմից և մոտ ժամանակներս հանդես կգամ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում օրենսդրական կարգավորման առաջարկով:

Հարգանքով՝

ՇԱՔԵ ԻՍԱՅԱՆ